ԱՆՈՄԻԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕՏԱՐՈՒՄՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐԱՄ ՎԱՐՏԻԿՅԱՆ

Արդի հասարակությունները առանձնանում են ընթացքների և զարգացումների բարձր ինտենսիվությամբ, հասարակական փոփոխությունների արագացմամբ: Ակնհայտ են թե՛ մակերեսային և թե՛ խորքային գործընթացների բարդ դինամիկան, հասարակականի ծավալուն բազմաչափությունը, կարծես միմյանց հետ կապ չունեցող տարրերի բարդ փոխպայմանավորվածությունը[1]: Իրականության արագացող բարդացումը, համակարգի ապագա իրավիճակների անկանխատեսելիությունը ներկա զարգացումների համատեքստում նկատելի են հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և մակարդակներում: Մեր օրերի հասարակությունների անդամը, հատկապես գլոբալ մեգապոլիսների քաղաքացին իր կյանքն ապրում է փոփոխությունների կարևորագույն արդյունք հանդիսացող բնույթների, ձևերի ծայրահեղ բազմազանությունում[2]: Նորի հարատև արտադրությունը, միմյանց փոխարինող իրականություններն առաջ են բերում նորմատիվային խորը անորոշություն՝ ծայրաստիճան բարդացնելով հասարակական ընտրության գործընթացը:

Ասվածը վերաբերում է հատկապես հետխորհրդային հասարակություններին՝ անկախ դրանց քաղաքական կառուցվածքից, տնտեսական ձեռքբերումներից, սոցիալական վերարտադրման ձևերից, մշակութային առանձնահատկություններից[3]: Հայաստանի Հանրապետությունը՝ որպես այլափոխվող համաշխարհային համակարգի մաս, վերջին տասնամյակներում իր վրա զգում է այդ ամենի հետևանքները: Խորհրդային Միության անկումը, քաղաքական համակարգի վերափոխումը, անցումը տնտեսավարման նոր ձևերի, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, բնակչության աղքատացումը Ղարաբաղյան հակամարտության և երկրաշարժի հետևանքների հետ մեկտեղ բերեցին հայաստանյան հասարակության բացասական փոխակերպումների: Աստիճանաբար ամրապնդվող շուկայական հարաբերությունները, նեոլիբերալիզմի գաղափարախոսությունը հանգեցրին արժենորմատիվային հակասությունների: Որոնց հետևանքը եղավ հայաստանյան հասարակության անոմիան՝ անընդհատ վերարտադրվող մի իրավիճակ, երբ

[1] Տե՛ս **J. Urry**, Global Complexity, 1st edition, Polity, 2002:
[2] Տե՛ս **S. Sassen**, The Global City: New York, London, Tokyo, Priceton Paperbacks, 2001:
[3] Տե՛ս **Кара-Мурза С. Г.** Аномия в России: причины и проявления. М., 2013:

ակնհայտ է հասարակության կայուն գործառման արժեքորմատիվային հիմքերի խեղումը[4]: Այստեղ ակնառու է Մերտոնի տրամաբանությունը. մշակույթով ամրագրված նպատակներն ու դրանք ձեռք բերելու միջոցները ոչ միայն չեն համադրվում, այլև հակասում են միմյանց[5]: Գերճկուն, վերջնական չհաստատվող արժեքորմատիվային համակարգը կենսական անկայունության, ներկայի և ապագայի քաոտիկ դետերմինացվածության և հասարակական անորոշության նախապայմաններից է: Այս-օրինակ հեղհեղուկությունը վտանգում է հայաստանյան հասարակության ներդաշնակ, անվտանգ գոյությունը: Հայաստանցին, դժվարությամբ կողմնորոշվելով բազմաբարդ, իրարամերժ, անվստահելի տեղեկատվական հոսքերի հորձանուտում, վերածվում է առօրեական հաղորդակցությունների, մեդիա- և դրանով միջնորդավորվող մարկետինգային միջոցառումների պասիվ օբյեկտի, դառնում է այսօրվա վտանգների, սպառնալիքների, արդի ռիսկերի կրողը:

Իրավիճակը խորացնում է տարիներ շարունակ փոփոխական ինտենսիվությամբ ընթացող Ղարաբաղյան պատերազմը: Ռազմական գործողությունների վերսկսման մշտական վտանգը առաջ է բերում ապագայի անկանխատեսելիություն, խիստ հոռետեսական վիճակ, որոնք ազդում են ներկայի վրա: Վտանգն ու անկանխատեսելիությունը լեգիտիմացնում են հայաստանյան իշխանական համակարգը, հաստատում դրա թե՛ գաղափարական, թե՛ գործիքային անհրաժեշտությունը, հնարավոր դարձնում միանձնյա-օլիգարխիկ քաղաքական կառավարման գոյությունը: Դրանց առկայությունը «ռազմականացնում է» հասարակության քաղաքացիական, ոչ ռազմական կյանքը և կենսագործունեությունը, ինչի դրսևորումներից են.

- «նպատակը արդարացնում է միջոցները» սկզբունքով գործող լեգիտիմ բռնությամբ ավտորիտարիզմը թե՛ քաղաքական կառավարման համակարգում, թե՛ այլաբնույթ սոցիալական հարաբերություններում,
- «խաղաղ» խնդիրների «ռազմական» կարծր լուծումները, երբ հաշվի չեն առնվում բացասական հետևանքները,
- հասարակության գոյության հիմքում ընկած արժեհամակարգի նեղացումը, ընտրվածությունը և ձևավորվող՝ այլընտրանք չունեցող հասարակական ստորակարգությունը, երբ վերջինիս հետ առնչություն չունեցող քաղաքացին մեկուսացվում է գոյության համար անհրաժեշտ ռեսուրսներից,
- բևեռացումը, երբ հասարակության ստորին շերտերը, ինչպես նաև ստորակարգությունից դուրս մղված քաղաքացին արժեզրկվում են՝ վերածվելով գործիքային նշանակության «էլեկտորալ ամբոխի», հարկատուի, առևտրային հարաբերությունների կրավորական մասնակցի, իսկ վերին շերտերը, հակառակը, գերարժևորվում են, վերած-

---

[4] Տե՛ս **E. Durkheim**, The Division of Labor in Society, Free Press, New York, 1964:

[5] Տե՛ս **R. Merton**, Social Theory and Social Structure, Free Press, New York, Enlarged Edition, 1968, էջ 185-214:

վում հասարակական բարիքների «միանձնյա» տիրապետողների,

- նյութական, այլ հասարակական բարիքներ ստեղծելու, կուտակելու և յուրացնելու երկարաժամկետ հեռանկարում հասարակության, պետության համար խիստ ծախսատար, միևնույն ժամանակ օլիգարխիկ վերնախավի համար գերեկամուտներ ապահովող ռեժիմը,
- հասարակական առանձին խմբերի բացասական պիտակավորմանը, նորմատիվային բևեռացման խորացմանը նպաստող համախմբող գիտակցության ձևավորումը:

Հակամարտության այս «ախտանիշները» լրացվեցին այսպես կոչված «անցմամբ» պայմանավորված անկայունությամբ, նորմատիվային անորոշությամբ, որոնք սկսեցին հաղթահարվել անոմիայի ինստիտուցիոնալացման միջոցով: Այսպես, հասարակությունների արդիական գործառման համար անհրաժեշտ հոգնակի արժենորմատիվային համակարգերը միաձուլվեցին, դարձան եզակի, համընդհանուր[6]: Այսուհետ հասարակական հարաբերությունների բարդ վերարտադրման նորմատիվային միակ ուղղորդիչը դառնում է շահը, նյութական հարմարավետությունն ու ապահովվածությունը և վերջիններիս գրավական իշխանությունը: Առաջանում է օլիգարխիկ-իշխանական շերտի գոյությունն ապահովող միաչափ ստորակարգություն, որում բարձ դիրք զբաղեցնելու մշտական ձգտումը կարևորագույն հրամայական է: Ավելին, տեղի ունի նաև հայաստանյան հասարակության ինստիտուցիոնալ վերարտադրման այլասերում: Ինստիտուտների բացահայտ գործառույթների կայուն վերարտադրումը փոխարինվեց հիմքում շահ հետապնդող ճկուն և ակնթարթային լատենտ գործառույթների անկայուն վերարտադրմամբ, ինչն իր հերթին խթանեց և խորացրեց առկա անորոշությունը, անկայունությունը:

Այսպիսով, հայաստանյան հասարակությանը, քաղաքացուն սպառնացող վտանգները համաշխարհային, տարածաշրջանային անկանխատեսելի գործընթացների, Ղարաբաղյան հակամարտության, ներհայաստանյան անորոշ ընթացքների և անկայունությունների արգասիք են: Զարմանալի է, որ այս անկայուն վիճակը, անոմիկ անորոշությունը գործիքայնացվում են ու հենք դառնում հասարակական գործընթացների, հարաբերությունների կայունացման, զարգացումների որոշակիացման, ինչի մասին են վկայում նաև հասարակական կյանքի տարբեր մակարդակներում ձևավորվող անվտանգության հակադիր, անգամ իրարամերժ պրակտիկաները և ռազմավարությունները: Այսպես, ՀՀ իշխանական-քաղաքական օրակարգում խոսքն առաջին հերթին ազգային-պետական անվտանգության մասին է[7], որի ապահովման համար անհրաժեշտ գործողություններն ուղղված են ոչ միայն դուրս՝ ակնհայտ թշնամու, այլ

---

[6] Տե՛ս **S. F. Messner, R. Rosenfeld**, Crime and the American Dream, Belmont, California, Wadsworth, 1994:

[7] Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին: ՆՀ-37-Ն, 25.02.2007թ.: http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189: Այցելություն՝ 11. 02. 2017 թ.:

նաև ցանկացած ներքին սոցիալական սուբյեկտի, երևույթի դեմ, որը, ըստ ռազմաքաղաքական էլիտայի, հարակից ուժերի և այսօր ձևավորված մոբիլիզացիոն հանրային դիսկուրսի, խոցում է անվտանգության ցանկացած տարր: Այս ամենի հետևանքով Հայաստանում վերանայվում է մարդու ազատությունների և հիմնարար իրավունքների օրակարգը: Կարևորելով ասվածը՝ անդրադառնանք անվտանգության հայեցակարգերին, որոնց ուշադրության կիզակետում են նաև սոցիալական միկրոսուբյեկտի խոցելիությունը, գործունեության, հարաբերությունների անվտանգությունը, ազատ ինքնադրսևորման հնարավորությունները: Անվտանգությունը մասնավորապես դիտվում է որպես ազատ ընտրության հնարավորություն, երբ անձը, խումբը, հանրույթները, ինչպես նաև պետությունները ինքնուրույն, առանց արտաքին միջամտության կարող են ազատ իրականացնել սոցիալական, տնտեսական, մշակութային նպատակները, քաղաքական, միջազգային ռազմավարությունները[8]: Մյուս կողմից՝ անվտանգությունը մարդկային ակտիվություն է՝ միտված վտանգների կանխատեսմանը, բացահայտմանը, թուլացմանը, չեզոքացմանը, որոնք սպառնում են ոչնչացնել նյութական և հոգևոր հիմնարար արժեքներ, խոչընդոտել զարգացումը[9]: Այսօր արդիական է խոսել նաև սոցիալական անվտանգության մասին: Այն սահմանվում է որպես մակրո-, միկրոմակարդակի սոցիալական սուբյեկտների նպատակների, իդեալների, արժեքների, հետաքրքրությունների ապահով պաշտպանության, մարդկային պոտենցիալի զարգացման, մարդու գործունեության, նրա սոցիալիզացիոն և կենսապահովման համակարգերի, կայուն արժեհամակարգի և բարոյականության խթանման հնարավորություն[10]: Այստեղ կարևոր են նաև անվտանգության ուսումնասիրությունների ուելսյան կամ աբերիստուիթյան դպրոցի հիմնական գաղափարները: Ինչպես քննադատական դպրոցի այլ ուղղություններ, այնպես էլ դրա առաջատար ներկայացուցիչներ Քեն Բութը և Ռիչարդ Ուին Ջոնսը քննադատում են անվտանգային ուսումնասիրությունների ավանդական մոտեցումներին հատուկ պետականակենտրոն հայեցակարգը՝ վերլուծությունների կենտրոն մղելով մարդու ազատությունը[11]: Ըստ հեղինակների՝ ժամանակակից պետությունը ոչ միայն անվտանգության հիմնական տրամադրողն ու երաշխավորը չէ, այլև ընդհակառակը՝ մարդուն սպառնացող վտանգների աղբյուր է[12]: Անվտանգությունը միայն արտաքին սպառնալիքներից, պատերազմից պաշտպանվածությունը չէ: Այն երաշխավորում է ազատություն ճնշումներից, աղքատությունից, անգրագիտությունից, առող-

---

[8] Տե՛ս **Бабосов Е. М.** Безопасность // Социология. Энциклопедия. Минск., 2003:

[9] Տե՛ս **Романова А. П., Мармилова В. О.** Культурная безопасность как важнейший фактор национальной безопасности // "Человек. Общество. Управление", 2008, № 2, էջ 84-94:

[10] Տե՛ս նույն տեղը:

[11] Տե՛ս **C. Peoples, N. Vaughan-Williams**, Critical Security Studies. An Introduction. Addington. Routledge, 2010, էջ 29-45:

[12] Տե՛ս **K. Booth**, Theory of World Security. Cambridge: Cambridge University Press, 2007, **R. W. Jones**, Security, Strategy and Critical Theory, Boulder, CO: Lynne Rienner, 1999:

ջական խնդիրներից: Այսպիսով՝ ակնհայտ է, որ հայաստանյան պայմաններում մարդու անվտանգության վերոհիշյալ տարրերը խոցված են: Ավելին, անվտանգության քաղաքական օրակարգում պետականության առաջնահերթությունը առանձին քաղաքացու անձնական, «միկրո անվտանգությունը» տարօրինակ կերպով դարձնում է երկրորդական, այդ իսկ պատճառով՝ կրկնակի խոցելի: Իշխանության՝ որպես անվտանգության ձևական երաշխավորի նկատմամբ խորը անվստահության[13], նրանից օտարացման, ինստիտուցիոնալ այլասերման հետևանքով Հայաստանի Հանրապետության շարքային քաղաքացին մնում է իր վտանգների և սպառնալիքների հետ միայնակ: Նա ստիպված է իր անվտանգությունն ապահովել, համապատասխան կենսական ծրագրեր կառուցել ոչ միայն հաշվի առնելով արտաքին վտանգները, այլ նաև պաշտպանվելով սեփական իշխանություններից, նոր՝ նեոլիբերալ պայմանների, օլիգարխիկ վերնախավի, կիսաքրեական խմբերի ամենաթողությունից, ամենուր ներթափանցած մրցակցության անցանկալի հետևանքներից: Ի պատասխան անոմիկ անորոշության, մշտական վտանգների, իրական և հնարավոր ռիսկերի գոյության՝ ակնհայտ են շարքային քաղաքացու սոցիալական օտարումը, հատկապես վերջինիս մասնակի դրսևորումը՝ սոցիալական տկարությունը, այն է՝ մարդու սպասումները, պատկերացումներն այն մասին, որ իր անձնական վարքը, նպատակաուղղված գործողությունները չեն հանգեցնում իր համար ցանկալի նպատակների[14]: Սոցիալական տկարության երևույթը իր հերթին զուգահեռվում է ձեռքբերովի անօգնականության համախտանիշի հետ: Հայաստանում իշխանության բևեռացումը, հովանավորյալ ամենաթողությունը, քաղաքացիների նպատակների ձախողման հաջողված հարուստ փորձը, ինչպես նաև խորը վախը սպասումների ֆրուստրացիայից դրդում են քաղաքացուն հրաժարվել սեփական իրավիճակի բարելավմանը միտված փորձերից, նույնիսկ եթե դրանք օբյեկտիվորեն պտղաբեր են[15]: Քաղաքացու սոցիալական օտարումը հանդես է գալիս սոցիալական իմաստազրկմամբ նույնպես, երբ կենսական նշանակություն ունեցող որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ստանդարտները ոչ մի կերպ պարզ չեն[16]: Մշակութորեն ամրագրվող նպատակները չեղարկվում են՝ կորցնելով իրենց կենսական, կեցութային իմաստները: Քաղաքացին հրաժարվում է մասնակ-

[13] Տե՛ս **«Այ Փի Էս Սի»** քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտ, IPSC, «ՀՀ իշխանությունների գործունեության գնահատականները. տեսանելիությունը, ձեռքբերումներն ու բացթողումները և զարգացման ռազմավարական առաջարկները», Սոցիոլոգիական հետազոտություն, GS Index-2/13 վերջնական հաշվետվություն, 2013 թ., էջ 69-74: Այցելություն՝ 11.02.2017 թ.:

[14] Տե՛ս **M. Seeman,** On The Meaning of Alienation, American Sociological Review, Vol. 24, № 6, 1959, էջ 783-791:

[15] Տե՛ս **Արման Ղարագուլյան**, Ձեռքբերովի անօգնականությունը որպես հետխորհրդային իրականության սոցիոմշակութային ախտանիշ, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2016, № 1 (19), էջ 51-62:

[16] Տե՛ս **M. Seeman**, նշվ. աշխ.:

ցել, մասը լինել իր կողմից չկառավարվող, անվերահսկելի տնտեսական, քաղաքական, մշակութային հարաբերություններին, սոցիալական իրականությանը՝ սահմանափակելով այն օպտիմալ նեղ, փոքրածավալ սոցիալական տիրույթով, որտեղ իրավիճակը գոնե կարճաժամկետ հեռանկարում կանխատեսելի է, յուրովի վերահսկելի: Անվտանգ կենսապահովման խնդրում այլևս չապավինելով անվստահելի կառույցներին, մակրո գործընթացների ցանկալի ելքերին՝ քաղաքացին հանդես է բերում անվտանգության ապահովման, կենսական խնդիրների հաղթահարման անհատական ռազմավարություն՝ պարփակվելով կայունության և որոշակիության «կղզյակում»: Այն այսուհետ հասարակական գոյության առաջնային միավոր է, որի պահպանմանը և վերարտադրմանն են ուղղված սոցիալական սուբյեկտի բոլոր ռեսուրսները: Այս «կղզիացումն» ունի նաև ժամանակաբանական բաղադրիչ: Մարդը ստիպված է սեղմել ապագային միտված իր կենսական պլանները՝ կարճացնելով կանխատեսելի, հոռետեսական ապագան ընդամենը 1-2 տարով: Սոցիալական ժամանակի խտացում առկա է ոչ միայն ապագային միտված ծրագրերում, այլ նաև ներկայում: Կրճատվում է մարդու սոցիալական ժամանակն այսօր, այն է՝ ներգրավվածությունը որևէ հասարակական ակտիվ գործունեության մեջ[17]: Հասարակական իրականությունը, առանձին անհատի առօրյան ժամանակի կոլապսի հետևանքով վերածվում են կարճաժամկետ սոցիալական մասնիկների քաոսային խճանկարի: Մարդը ոչ թե ապրում է անընդհատ ընթացող կյանք, այլ մասնակցում է, մասնավորաբար, շահի արդյունավետ արտադրության սկզբունքով օպտիմալացված միաժամանակ առկա կամ իրար հաջորդող գործառական ծրագրերի: Այդ «կղզյակի» առկայությունը խոսում է նաև սոցիալական օտարման այնպիսի բաղադրիչների մասին, ինչպիսիք են սոցիալական մեկուսացումը և մշակութային հեռացումը: Առաջինի դեպքում ունենք սոցիալական կապերի խզում, դրանց ընդամենը գործիքային արտադրություն: Երկրորդի մասին խոսում ենք, երբ մարդը հակադրվում է, ոչ համարժեք է գնահատում հասարակությունում ամրագրված արժեքներն ու հավատալիքները[18]: Հաշվի առնելով ժամանակի ընթացքի հետարդիական բնույթը, հասարակական իրականության ծայրահեղ մասնատվածությունը, սոցիալական օտարումը սոցիալական մեկուսացման և մշակութային հեռացման տեսքով՝ ունենք անվտանգության ապահովման, անկայունության հաղթահարման, որոշակիության հաստատման նշված կենսական ռազմավարությունների մի շարք բացասական, անցանկալի ախտանիշներ:

- Ակնհայտ է հասարակական պատասխանատվության ծայրահեղ նեղացումը: Այն առաջին հերթին տեղին է այն ամենի պարագա-

[17] Տե՛ս **Кривошеев В. В.** Короткие жизненные проекты: проявление аномии в современном обществе // "Социологические исследования", 2009, № 3, էջ 57-67:

[18] Տե՛ս **M. Seeman**, նշվ. աշխ.:

յում, ինչը միշտ գտնվում կամ ժամանակավորապես հայտնվում է ներկայացված «կղզյակում», այն է՝ սեփական անձը, ընտանիքը, մասնավոր ունեցվածքը, լավագույն դեպքում՝ բարեկամներն ու ընկերական շրջապատը: Քաղաքացին անպատասխանատու է առավել ընդգրկուն հասարակականի նկատմամբ, այն ամենի, ինչի ընթացքն իր համար անվերահսկելի, անկառավարելի է:

- Վերը քննարկված հասարակական մեկուսացումը, մշակութային հեռացումը, իրականության մասնատումն ու մասնիկների բախումն ու հակադրումը, ժամանակի արագ հոսքը ծայրահեղ բարդացնում, կարելի է ասել՝ ոչնչացնում են իրադարձությունների միասնական, համադրական վերապրման հնարավորությունը: Մերժվում է տիրապետող արժենորմատիվային համակարգի, հասարակական հարաբերությունների բարոյական, ոչ պրագմատիկ ուղղորդիչի ձևավորումն ու պահպանումը: Համախմբումը առկա է միայն ստորին պահանջմունքների, զանգվածային սարսափի կամ ամբոխի կրիտիկական ճնշման պարագայում:
- Անհնարին է լեգիտիմ, տիրապետող ճաշակի ձևավորումը: Սոցիալ-մշակութային ենթախմբերն ըստ էության հավասարարժեք են, սկզբունքորեն՝ հավասար հնարավորություններով:
- Որպես ուղենիշ ունենալով նյութական շահի առաջնահերթությունը, անվճար հեդոնիզմը, նորույթի ձեռքբերման ձգտումն ու նետոկրատիկ արժեհամակարգը՝ ժամանակակից հայաստանցին իր կայուն, որոշակի կենսապահովման համար երբեմն հակված է ընտրելու նպատակներին հասնելու նորարարական ուղի, որը միևնույն ժամանակ կարող է համակերպվել համակեցության կանոնների և այլոց գոյության հետ:
- Մասնատված հասարակական ակտիվությունը, մշտական վազքը, տեղեկատվական գերբեռնվածությունն ու նույնիսկ վերլուծական առաջնային տվյալներից հրաժարումը մերժում են գործունեությունների արդյունքների ռացիոնալ գնահատումը, ինչով կարելի է բացատրել անհաջողությունները, որոնք պատճառ են հավելյալ ֆրուստրացիայի, անոմիայի և սոցիալական օտարման:

Այսպիսով, ունենալով սոցիալական օտարված, կայունության, որոշակիության «կղզյակում» պարփակված, ընդհանուրի նկատմամբ պատասխանատվության զգացումից դուրս, անտարբեր քաղաքացի՝ ոչ միայն շատ դժվար է խոսել Հայաստանի Հանրապետության ազգային-պետական անվտանգության ձևավորման և պահպանման մասին, ինչը ներկայումս առավել քան օրհասական խնդիր է, այլ նաև առհասարակ ընդհանրական, ներդաշնակ, կայուն սոցիալական համակարգի մասին: Մինչդեռ անհրաժեշտորեն ստեղծվելիք լայնածավալ չեզոքությունների կառավարումը, հասարակության նորմատիվային համակարգի և վերջինիս կոլեկտիվ կազմակերպման համադրությունը և, վերջապես, քաղաքացու հասարակական արժեքի, այլ ոչ թե գործիքային նշանակության բարձրացումը նավազագույն քայլ են հասարակական

մասնատման բարդագույն խնդրի հաղթահարման, դրանով իսկ համադրական, բազմաչափ, դինամիկ անվտանգության ստեղծման և հեռանկարային պահպանման համար:

Բանալի բառեր – *անվտանգություն, սոցիալական անոմիա, սոցիալական օտարում, սոցիալական տկարություն, ձեռքբերովի անօգնականության համախտանիշ, սոցիալական մեկուսացում*

АРАМ ВАРТИКЯН – ***Аномия, социальное отчуждение и безопасность в армянском обществе.*** – В статье рассматривается проблема безопасности индивида в условиях аномии – вырождения нормативных направляющих общественного существования. Ответом на нормативную неопределённость, непредсказуемость будущих состояний является социальное отчуждение. Член современного армянского общества выбирает такие стратегии безопасности, где объектом служит некий её «островок», включающий в себя лишь собственное Я, родных, некие материальные ценности, более или менее контролируемую повседневность. Такое положение вещей указывает на глубокую социальную и культурную разобщённость армянского общества, низкий уровень социальной сплочённости и согласованности. Вследствие этого индивидуальные стратегии безопасности не когерентны с тактиками и стратегиями безопасности армянского общества как целого, а также армянской государственности.

Ключевые слова: *безопасность, социальная аномия, социальное отчуждение, социальное бессилие, синдром приобретённой беспомощности, социальная изоляция*

ARAM VARTIKYAN – ***Anomie, Social Alienation and Security in Armenian Society.*** – The current era is distinguished by the unprecedented intensity of processes, changes, and developments, which partially condition the uncertainty, and social instability. The chaos of information flows, which is the source of permanent tensions, anxieties, fears deepens and brings about systematic continuity to them. The modern multidimensional man is the bearer of the many unpredictable risks resulting from the unstable, uncertain relations of the new century. In his turn, the modern RA citizen being the part of the above-mentioned processes is the bearer of the vulnerabilities and threats of the new system of values and norms, public relations, neo-liberal market economy, political management emerging parallelly with independence, as well as the ongoing Karabagh conflict. The mutilation of the institutional reproduction in the Armenian society, the deep social distrust and the large-scale individualization inherent to these conditions leave the citizens alone with their problems. As a result, only personal, limited strategies are formulated to resist, overcome and most importantly establish security, which deepens the social fragmentation, regulatory uncertainty, and instability. As a result, we lose the possibility to have a harmoniously collaborating social entity, which is of vital importance to the maintaining of the long-term security in Armenia.

Key words: *security, social anomie, social alienation, social powerlessness, learned helplessness, social isolation*